Հավելված N 3
ՀՀ կառավարության 2021 թվականի
փետրվարի 4-ի N 142 - Լ որոշման

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՓԱԹԵԹ

ՀՀ	Ուղղություն/ Միջոցառում	Նկարագրություն	Ակնկալվող վերջնարդյունք	Ֆինանսավորումը և աղբյուրը	Իրականացնող մարմիններ
13.	Պետական գնումների ընթացակարգերում հակաճգնաժամային միջանկյալ մեխանիզմի մշակում և գործարկում	Նախատեսվում է պետական գնումների գործող կարգավորումների շրջանակներում ձևավորել միջանկյալ կիրառության հակաճգնաժամային մեխանիզմ՝ ներդնելով ժամանակավոր խթաններ հայաստանյան ծագում ունեցող աշխատանքային և/կամ արտադրական ռեսուրսների օգտագործումը խթանելու նպատակով՝ սահմանելով, որ եթե հաղթող մասնակիցը՝ անկախ ռեզիդենտ կամ ոչ ռեզիդենտ լինելու հանգամանքից, պարտավորվում է պայմանագիրը կատարելու ժամանակ ավելի քան X%-ի չափով օգտագործել հայաստանյան ծագում ունեցող աշխատանքային և/կամ արտադրական ռեսուրսներ, ապա վերջինիս սուբսիդավորման եղանակով կարող է փոխհատուցվել պայմանագրի արժեքի X %-ը:	Պայմանագրերի կատարման ընթացքում հայաստանյան ծագում ունեցող արտադրական և/կամ աշխատանքային ռեսուրսների օգտագործման ապահովման միջոցով տեղական կարողությունների հզորացում և դիմակայունության բարձրացում	Ենթակա է ճգրտման՝ կախված մշակվելիք գործիքի առանձնահատ-կություններից ՀՀ պետական բյուջե	ՀՀ Ֆինանսների նախարարություն ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
14.	Գյուղատնտեսության ոլորտում իրականացվող թվով 13 պետական աջակցության ծրագրերի շարունակության ապահովում և թվով 9 վարկային/լիզինգային ծրագրերում լրացուցիչ արտոնությունների տրամադրում	Գյուղատնտեսության ոլորտում վարկի/լիզինգի տոկոսադրույքների սուբսիդավորմամբ իրականացվող թվով 9 պետական աջակցության ծրագրերի շրջանակներում մինչև 2021 թվականի դեկտեմբերի 31-ը ֆինանսական կառույցների կողմից ՀՀ դրամով տրամադրվող վարկի/լիզինգի փաստացի տոկոսադրույքի առավելագույն չափը կսահմանվի 14 % և տրամադրվող	Գյուղատնտեսության ոլորտում իրականացվող պետական աջակցության ծրագրերի շարունակականության, ինչպես նաև պետական աջակցության ծրագրերին մասնակից տնտեսավարողների համար միանման արտոնյալ և բարենպաստ պայմանների և զբաղվածության ապահովում,	9.0 մլրդ ՀՀ դրամ ՀՀ պետական բյուջե	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն

ՀՀ	Ուղղություն/ Միջոցառում	Նկարագրություն	Ակնկալվող վերջնարդյունք	Ֆինանսավորումը և աղբյուրը	Իրականացնող մարմիններ
		վարկի/լիզինգի տոկոսադրույքների սուբսիդավորումը կիրականացվի վարկային կամ լիզինգային պայմանագրերով սահմանված տոկոսադրույքների չափով, որի արդյունքում վարկը/լիզինգը տնտեսավարողներին կտրամադրվի 0 % տոկոսադրույքով	տնտեսավարողների եկամուտների կայունացում		
15.	ՀՀ համայնքների ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրերի իրականացում	Նախատեսվում է ակտիվացնել պետական համաֆինանսավորմամբ սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում ՀՀ համայնքների կողմից ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված ծրագրերը	Համայնքներում կապիտալ ներդրումների ակտիվացում, տնտեսական և սոցիալական նշանակության ենթակառուցվածքների բարելավում և արդիականացում, համայնքային բնակչության կյանքի որակի բարելավում	30 մլրդ ՀՀ դրամ ՀՀ պետական բյուջե ՀՀ համայնքային բյուջեներ Մասնավոր ներդրողներ	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն ՀՀ էկոնոմիկայի նախարարություն ՀՀ քաղաքաշինության կոմիտե
16.	Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման 1-ին միջոցառման վերանայում և գործարկում	Նախատեսվում է վերանայել 1-ին միջոցառման շրջանակներում կիրառված գործիքի որոշակի պայմաններ, ներառյալ՝ աջակցության նպատակները, այն համապատասխանեցնելով ներկա փուլում մասնավոր հատվածի կայունության հետ կապված խնդիրներին	Մասնավոր հատվածի՝ տնտեսական անորոշություններին արձագանքելու, փոփոխվող իրականությանը հարմարվելու և տնտեսական գործունեության կայունությունն ապահովելու հնարավորությունների ձևավորում	5.3 մլրդ ՀՀ դրամ ՀՀ պետական բյուջե	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ)
17.	Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման՝ «Գաղափարից մինչև բիզնես» 17-րդ միջոցառման իրականացում	Ծրագրի նպատակն է օժանդակել կորոնավիրուսի տարածման հետևանքով Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիաների ոլորտի առանձին տնտեսվարողների մոտ առաջացած դժվարությունների հետևանքով արդյունավետ աշխատատեղերի պահպանությանը, ինչպես նաև խթանել ոլորտում նորարարական գաղափարների իրագործմանը և առևտրայնացմանը	Հաղթող կազմակերպությունների գաղափարների իրականացում, աշխատատեղերի պահպանում և նորարարական գաղափարների առևտրայնացում	Մոտ 1.0 մլրդ դրամ ՀՀ պետական բյուջե	ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն

ՀՀ	Ուղղություն/ Միջոցառում	Նկարագրություն	Ակնկալվող վերջնարդյունք	Ֆինանսավորումը և աղբյուրը	Իրականացնող մարմիններ
18.	Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման՝ «Սկսնակ կամ նորարար գործարարության զարգացման» 19-րդ միջոցառման իրականացում	Ծրագրի նպատակն է ձեռնարկատիրական գիտելիքների ընդլայնման և ֆինանսների հասանելիության բարձրացման միջոցով նպաստել «զրոյից» բիզնես ստեղծելու ձգտում ունեցող շահառուների ձեռնարկատիրական գաղափարների իրագործմանը:	Սկսնակ գործարարների ձեռնարկատիրական գիտելիքների ընդլայնում և ֆինանսական միջոցների հասանելիության ապահովում	750 մլն ՀՀ դրամ ՀՀ պետական բյուջե	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն «Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամ
19.	«Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման 23-րդ միջոցառումը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին որոշման նախագծի ներկայացում	23-րդ միջոցառման նպատակն է օժանդակել կորոնավիրուսի հետևանքով զբոսաշրջությանն ուղղակիորեն առնչվող ոլորտներում ռեզիդենտ տնտեսվարողների մոտ առաջացած դժվարությունների հետևանքով ստեղծված իրավիճակում գործունեության շարունակականության ապահովմանը: Փոփոխությամբ միջոցառման գործողության ժամկետն առաջարկվելու է երկարաձգել:	Զբոսաշրջության և հարակից ոլորտների տնտեսվարողների մրցունակության և աշխատատեղերի պահպանում	Շուրջ 3.3 մլրդ դրամ ՀՀ պետական բյուջե	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն ՀՀ պետական եկամուտների կոմիտե
20.	Տեղական արտադրության և արժեշղթաների զարգացման աջակցության ծրագրի հաստատում և իրագործում	Նախատեսվում է մշակել և գործարկել գործող և սկսնակ ընկերություններին աջակցության ծրագիր թուրքական ծագում ունեցող ապրանքների ներմուծման ժամանակավոր արգելքով պայմանավորված՝ տեղական արտադրությունների զարգացման համար:	Երկրում հորիզոնական և ուղղահայաց արժեշղթաների զարգացման համար գործարար հնարավորությունների և կարողությունների, ինչպես նաև տարածքային տնտեսական զարգացման հնարավորությունների ընդլայնում	2 մլրդ ՀՀ դրամ ՀՀ պետական բյուջե Մասնավոր ներդրումներ	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ)
21.	Արտահանողի զարգացման դրամաշնորհների (ԱԶԴ) ծրագրի իրագործում	Ծրագրի միջոցով կստեղծվեն ՓՄՁ-ների արտադրական, առևտրի և արտահանման կարողությունների զարգացման միջոցով համատեղ օգտագործման ռեսուրս կենտրոններ: Առաջնահերթությունը տրվում է գյուղատնտեսության, սննդի	ՓՄՁ-ների աճի և արտահանման կարողությունների հզորացում	1.8 մլն ԱՄՆ դոլար ՀՀ պետական բյուջե (ՀԲ «Առևտրի խթանում և որակի ենթակառուցվածք-	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն «Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամ

ՀՀ	Ուղղություն/ Միջոցառում	Նկարագրություն	Ակնկալվող վերջնարդյունք	Ֆինանսավորումը և աղբյուրը	Իրականացնող մարմիններ
		վերամշակման և տեքստիլի ոլորտներում ծրագրերին:		ներ» վարկային ծրագիր)	
22.	Բարձր տեխնոլոգիական ոլորտում «Փորձնակների գործնական պրակտիկա» ծրագրի իրականացում	Ծրագրով նախատեսվում է մասնակիցների՝ փորձնակների գործնական մասնագիտական կարողությունների մեծացման արդյունքում ընդլայնել բարձր տեխնոլոգիական ոլորտի առաջատար ընկերություններում աշխատանքի տեղավորվելու հնարավորությունները:	Բարձր տեխնոլոգիական ոլորտում արժանապատիվ վարձատրությամբ զբաղվածության հնարավորությունների մեծացում	117 մլն ՀՀ դրամ ՀՀ պետական բյուջե	ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն
23.	«Ձեռնարկատեր + Պետություն հակաճգնաժամային ներդրումներ» փակ ոչ հրապարակային մասնագիտացված պայմանագրային ներդրումային ֆոնդ գործիքի շրջանակներում պլանավորված խողովակային ներդրումային ծրագրերի իրագործում	Նախատեսվում է «Ձեռնարկատեր + Պետություն հակաճգնաժամային ներդրումների կառավարիչ» ՓԲԸ-ի «Ձեռնարկատեր + Պետություն հակաճգնաժամային ներդրումներ» փակ ոչ հրապարակային մասնագիտացված պայմանագրային ներդրումային ֆոնդ գործիքի միջոցով մեկնարկել տնտեսության տարբեր ոլորտներում ապագայամետ ներդրումային ծրագրեր:	Ներդրումային ծրագրերի նախնական հավանություն և մեկնարկ	3.0 մլն ԱՄՆ դոլար «Ձեռնարկատեր + Պետություն հակաճգնաժամային ներդրումներ» փակ ոչ հրապարակային մասնագիտացված պայմանագրային ներդրումային ֆոնդ	ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն «Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» ՓԲԸ (համաձայնությամբ)
24.	Գյուղատնտեսական նշանակության հողերը որպես չօգտագործվող հողեր դասակարգելու չափանիշները և դրանց հաշվառման կարգը սահմանելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում	Ստեղծել օրենսդրական մեխանիզմներ՝ չօգտագործվող հողերի առավել արդյունավետ օգտագործումը և/կամ խոշորացումը ապահովելու նպատակով	Հողերի միավորման և օգտագործման արդյունավետության բարձրացման միջոցով գյուղատնտեսության արտադրողականության աճ	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջում	ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն Կադաստրի կոմիտե
25.	Գյուղական համայնքներում ոչ գյուղատնտեսական զբաղվածությունը խթանող	Գյուղական համայնքներում ոչ գյուղատնտեսական ոլորտների զարգացումը և զբաղվածության	Գյուղական համայնքներում ոչ գյուղատնտեսական բնույթի գործունեության	300 մլն ՀՀ դրամ ՀՀ պետական բյուջե	ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն

ՀՀ	Ուղղություն/ Միջոցառում	Նկարագրություն	Ակնկալվող վերջնարդյունք	Ֆինանսավորումը և աղբյուրը	Իրականացնող մարմիններ
	սուբինվեստիցիոն գործիքի մշակում և փորձնական գործարկում	հնարավորություններն ընդլայնելու նպատակով նախատեսվում է մշակել, այսպես կոչված, «ենթաներդրումային» կամ «սուբինվեստիցիոն» գործիք	հնարավորությունների ընդլայնում, տարածքային զարգացման անհամամասնություն-ների մեղմում, միջհամայնքային տնտեսական շարժունության և համագործակցության ակտիվացում	ՀՀ համայնքների բյուջեներ Մասնավոր ներդրումներ	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
26.	Ազգային վենչուրային հիմնադրամի գործարկում	Ծրագրի հիմնական նպատակն է՝ ստեղծել առնվազն 18 մլն դոլար կապիտալով ազգային վենչուրային հիմնադրամ և ներդրումներ ապահովել հայկական տեխնոլոգիական ստարտափներում՝ նպաստելով դրանց աճին և նորարարական էկոհամակարգի զարգացմանը	Հայկական տեխնոլոգիական ստարտափներում ներդրումների ակտիվացում և բարձր տեխնոլոգիական ոլորտի զարգացում	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում	ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ԹՈՐՈՍՅԱՆ

09.02.2021
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ